առկա չեն բավարար հիմքեր:

Ամփոփելով՝ Դատարանը եզրահանգում է, որ հայցը անհիմն է և ենթակա է մերժման:

<u>Դատական ծախսերի բաշխման հարցը</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101 հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ հայցը ենթակա է մերժման, իսկ Հայցվորի կողմից նախապես 30,000.00 ՀՀ դրամի չափով վճարվել է պետական տուրքի գումարը, Դատարանը եզրահանգում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Էդմոնդ Հովհաննիսյան Վահեի Ա/Ձ-ի հայցն ընդդեմ «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ թիվ «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/15-7» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Գրիգորի Վարդանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am